

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ

Ընթերցանության ժամանակ՝ 5 րոպե

«Կրթությունն ամենահզոր գեներն է, որի միջոցով կարելի է փոխել աշխարհը»:

Նելսոն Մանդելա

Կրթության մեջ գերազանցության հասնելու համար կարևոր է հստակ ձևակերպել ցանկալի արդյունքները: Օրինակ՝ Հարավային Կորեայում դպրոցականներն ուսանում են ամբողջ օրը, քանի որ դպրոցական կրթական համակարգի նպատակն է երաշխավորել մուտք լավագույն համալսարաններ: Իսկ, օրինակ, Ֆինլանդիայում երեխաները կատարում են նվազագույն տևալի աշխատանք, քանի որ նպատակը ոչ միայն խելացի երեխա կրթելն է, այլև հոգեբանորեն և սոցիալապես հավասարակշռված անհատ ձևավորելը: Սինգապուրում կրթությունը դիտարկում են որպես Էկոհամակարգ, ինչը նշանակում է, որ դպրոցները, համալսարանները և աշխատաշուկան փոխկապակցված են:

Թեև այս բոլոր երկրներն ունեն տարբեր կրթական համակարգեր, այս երկրներում գիտեն՝ որն է իրենց նպատակը և ինչ ակնկալել սեփական կրթական համակարգից: Ինչպես ասվում է հին ասացվածքում, եթե չգիտես՝ ուր ես գնում, անկասկած կհայտնվես մեկ այլ վայրում:

Հիմնվելով աշխարհում կրթական ոլորտի հիմնական մարտահրավերների վրա՝ մենք **որակն ու հասանելիությունը** սահմանել ենք որպես կրթության գերազանցության հիմնական բաղադրիչներ: Եկե՛ք կարճ անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին:

1. Որակը բաղկացած է տաղանդից, ուսուցիչներից և ուսումնական ծրագրից:

Տաղանդ. Կրթությունը կարող է հիմնարար փոփոխություններ բերել ցանկացած ազգի արժեքներում, գործողություններում և պատասխանատվության շրջանակում: Ուստի, մրցունակ կրթական համակարգ ունենալու համար անհրաժեշտ է զարգացնել **չարունակական կրթության** մշակույթը: Օրինակ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2019 թվականի գեկույցը վկայում է, որ շատ երկրներում **մեծահասակների մինչև 5%-ի համար են հասանելի** կրթական հնարավորությունները¹: Շարունակական կրթությունը Հայաստանում մեծապես թերազնահատված է:

Ուսուցիչներ. Երիտասարդ մասնագետներին պետք է խթանել և խրախուսել իրենց կարիերան ընտրելու ճանապարհին: Ֆինլանդիան, թերևս, լավագույն օրինակն է այս առումով, ուսուցիչների աշխատավարձը տարեկան կազմում է մոտավորապես 30 հազար ԱՄՆ դոլար, որը Տևտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության երկրների միջինից 13%-ով ավելի է, իսկ մանկավարժի մասնագիտությունը նույնքան հեղինակություն է վայելում, որքան բժշկինը կամ իրավաբանինը: Հայաստանում ուսուցիչները դեռևս անհրաժեշտ վարձատրություն չեն ստանում (տե՛ս Գծապատկեր 1-ը): Սա բացատրում է, թե ինչու է դպրոցներում արագորեն նվազում ուսուցիչների թիվը (2018 և 2019 թթ. ընթացքում գրեթե 30%-ով):



Թարգմանություն.
Բնօրինակը
անգլերենով է




FUTURES STUDIO

Think to connect!

¹ [GLOBAL REPORT ON ADULT LEARNING AND EDUCATION](#)

Գծապատկեր 1. Ամսական միջին աշխատավարձ, 2019 թ.




Աղբյուր՝ ILO

Խթաններից բացի ուսուցիչների ընդհանուր որակը պետք է անընդհատ բարելավվի հատուկ վերապատրաստումների միջոցով: Այստեղ է, որ հայկական սփյուռքը կարող է մեծ դերակատարում ունենալ՝ դառնալով ավելի հմուտ և փորձառու մասնագետների շտեմարան, որոնք կապրեն և կաշխատեն Հայաստանում:

Ուսումնական ծրագիր. Ժամանակակից և ճկուն ուսումնական ծրագրի մշակումը՝ առնվազն երեք լեզվով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն, չափազանց կարևոր է: Լավագույն օրինակներից մեկը Նիդերլանդներն է, որտեղ 2014 թվականին երկրի տարրական դպրոցներից 19-ն ընտրվեցին որպես ազգային երկլեզու փորձնական (պիլոտային) դպրոցներ: Դասավանդման կեսն անցկացվում էր անգլերեն: Այդ դպրոցներում նաև մեծ էր շեշտադրումը միջազգայնացման վրա (մասնակցություն բարեգործական ծրագրերի, մշակութային տարբերությունների քննարկում և այլն):

Հայաստանում ներկայումս մեծ անջրպետ կա աշխատաշուկայի կարիքների և կրթական համակարգի տված հմտությունների փաթեթի միջև: Սա նշանակում է, որ կրթական ծրագրերը հնացած են: Դա է պատճառը, որ երիտասարդության գործազրկության մակարդակը նույնպես բարձր է Հայաստանում (տե՛ս Գծապատկեր 2-ը):

Գծապատկեր 2. Երիտասարդության գործազրկություն (15-24 տարեկան, ընդհանուր աշխատուժի տոկոս), 2019 թ.



Աղբյուր՝ World Bank

2. Հասանելիություն և ֆինանսավորում. Այսօր կրթությունը շարունակում է անհասանելի իրավունք լինել աշխարհի միլիոնավոր երեխաների համար, որի հիմնական պատճառը ֆինանսների պակասն է: 2019 թ. դրությամբ Հայաստանի երեխաների միայն 35%-ն էր հաճախում նախադպրոցական կրթական հաստատություններ: Բարձր որակի և մատչելի նախադպրոցական կրթության վրա կենտրոնացումը, հատկապես կառավարության մակարդակի վրա, չափազանց կարևոր է, քանի որ այն հետագա կրթության հաջողությունների որոշիչ գործոնն է:

Լուծումների թվում, որոնք կմեծացնեն կրթության հասանելիությունը, անվտանգ միջավայրն է, կրթաթոշակները, կարիքների վրա հիմնված ֆինանսավորումը, խստը կրթական ծրագրերը, սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների համար նոր հարմարությունների ստեղծումը, ինչպես նաև ուսուցիչների համար դժվարին պայմաններում աշխատելու խթանները:

Երկրների մեծամասնությունում կրթությունը ֆինանսավորվում է մի քանի աղբյուրներից՝ կառավարություն, տնային տնտեսություններ, ընկերություններ և նվիրատուներ: Հարցն այն է, թե ինչպե՞ս արդյունավետորեն բաշխել այդ սահմանափակ ռեսուրսները: Օրինակ՝ Հայաստանի կառավարությունն իր կրթական բյուջեի միայն 9%-ն է ծախսում բարձրագույն կրթության վրա (ի տարբերություն համեմատելի երկրների 20%-ի):

Պետություն-մասնավոր գործընկերությունը կրթությունը բարելավելու ամենաարդյունավետ գործիքներից է՝ ավելի բարձր աշխատունակության, արդյունավետության, թափանցիկության, արագության և ճկունության միջոցով:

Եզրակացություն

Կրթության համապարփակ զարգացումը տնտեսության այլ ոլորտներում երկարաժամկետ աճի հիմնական խթանն է: Կրթության վրա ծախսերը դառնում են ավելի ու ավելի առաջնահերթ ամբողջ աշխարհում, քանի որ մարդկային կապիտալը վաղուց համարվում է տնտեսական համակարգի ամենանշանավոր հատկանիշը, հատկապես զարգացող երկրներում:

Ինստիտուտների միջև արդյունավետ համագործակցությունը կարող է հիմք հանդիսանալ զարգացման գործընթացի համար: Յուրաքանչյուր շահառու (կառավարությունը, ուսուցիչները, ծնողները, գործատուները և անգամ ուսանողները) պետք է ներգրավված լինի կրթական ծրագրերի մշակման և կրթական համակարգի այլ կարևոր հարցերում:

Այնուամենայնիվ, առավել կարևոր է կրթության մեջ **երկարաժամկետ մոտեցում** ունենալը: Ընդհանուր առմամբ, առնվազն տասը տարի է պետք կրթության ոլորտում արդյունքներ գեներացնելու և դրանք չափելու համար: Մինչդեռ, բազմաթիվ զարգացող երկրներում, ինչպես, օրինակ, Հայաստանում, յուրաքանչյուր չորս-հինգ տարին մեկ տեղի են ունենում համակարգային փոփոխություններ:

*Լինա Առուսթամյան
Հեղափոխող*

*Դավիթ Թավադյան
Հիմնադիր գործընկեր*



Դրույթներ և պայմաններ

© «Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամ

Բոլոր իրավունքները պաշտպանված են

«Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամը («Հիմնադրամ») հաշվետվության նկատմամբ ունի բացառիկ իրավունքներ:

Դուք չեք կարող փոփոխել, խմբագրել, պատճենել, վերարտադրել, հրապարակել, ստեղծել զեկույցի ածանցյալ աշխատանքներ: Ցանկացած չարտոնված վերարտադրություն կամ նյութի այլ օգտագործում կհամարվի Հիմնադրամի մտավոր սեփականության իրավունքի խախտում: Իր իրավունքների ոտնահարման դեմ Հիմնադրամը կարող է դիմել իրավական պաշտպանության միջոցների:

Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում պարունակվող տեղեկատվության ճշգրտության կամ ամբողջականության համար: Չեկույցը գործում է միայն զեկույցում նշված ամսաթվի դրությամբ:

Չեկույցը տրամադրվում է տեղեկատվական նպատակներով և չի պարունակում խորհրդատվություն որևէ հարցի վերաբերյալ: Հիմնադրամը չի երաշխավորում զեկույցում պարունակվող տեղեկատվության/վերլուծության ճշգրտությունը: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում գրված և/կամ սույն զեկույցում պարունակվող ցանկացած տեղեկություն/վերլուծություն օգտագործելու համար, և/կամ զեկույցում առկա ցանկացած սխալների կամ բացթողումների կամ անճշտությունների համար, ինչպես նաև զեկույցի հիման վրա իրականացված կամ չիրականացված գործողությունների համար: Դուք օգտագործում եք սույն զեկույցը ձեր իսկ սեփական ռիսկի ներքո:

Հիմնադրամի կայքից զեկույցը բացելիս կամ ներբեռնելիս, Հիմնադրամը չի երաշխավորում, որ ձեր համակարգիչը պաշտպանված կլինի համակարգչային վիրուսներից կամ վնասակար այլ ծրագրերից: